Հավելված 1

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
27.06.2022թ. № 11 նիստի որոշմամբ հաստատված՝
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում
մասնագիտության կրթական ծրագրի մշակման կամ վերանայման,
մշտադիտարկման և գնահատման կարգի»
ԲՊՀ ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

_____ Կ. Վ. Հարությունյան

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան, 2022 թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

I. ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ 5

II. ՄԿԾ-ի ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 9

III. ՄԿԾ-Ի ՆԿԱՐԱԳԻՐԸ 9

IV. ՄԿԾ-ի ՄՇԱԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 16

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտության կրթական ծրագրի մշակման ուղեցույցում (այսուհետ՝ Ուղեցույց) ներկայացվում են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ԲՊՀ) մասնագիտության կրթական ծրագրի (այսուհետ՝ ՄԿԾ) կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, ՄԿԾ-ում կիրառվող հիմնական հասկացությունները, ինչպես նաև ՄԿԾ-ի մշակման մեթոդաբանական սկզբունքներն ու ձևաչափերը:

Ուղեցույցի նպատակն է տրամադրել մեթոդական ցուցումներ ՄԿԾ մշակող ստորաբաժանումներին (ամբիոն, գիտաուսումնական կենտրոն)՝ ելնելով սահմանված պահանջներից ու սկզբունքներից և պահպանելով միասնական ձևաչափեր:

ՄԿԾ-ի մշակման գործընթացում հաշվի են առնվում՝

- բարձրագույն կրթության զարգացման արդի միտումները,
- ԵԲԿՏ[1]-ի հիմնական նպատակներն ու զարգացման ուղղությունները և Բոլոնիայի գործընթացով առաջադրված պահանջները՝ մասնավորապես կապված կրթության որակի ապահովման, ուսուցման և ուսումնառության գործընթացների արդիականացման հետ,
- աշխատաշուկայի արդի պահանջները,
- որակյալ կրթական ծառայությունների մատուցման և ՄԿԾ-ների մրցունակության ապահովման կարևորությունը,
- ներքին և արտաքին շահառուների կարիքները,
- ԲՊՀ ռազմավարական զարգացման ծրագրով սահմանված առաջնահերթությունները,
- ԲՊՀ ինստիտուցիոնալ կարողությունները:

[1] ԵԲԿՏ՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք:

Ի. ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

1. **Մասնագիտության կրթական ծրագիր (ՄԿԾ**). ուսումնական և հետազոտական բաղադրիչների ամբողջություն, որը սահմանում է բարձրագույն կրթության մակարդակը, մասնագիտական ուղղվածությունը, կրթության բովանդակությունն ու ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և որի անվանումը որակավորման հետ մեկտեղ պարտադիր ամրագրվում է ավարտական փաստաթղթում:

   ՄԿԾ-ն, այսպիսով, այն հիմնական փաստաթուղթն է, որով կարգավորվում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) 6-8-րդ մակարդակների և Որակավորումների ոլորտային շրջանակի (այսուհետ՝ ՈՈՇ) բնութագրիչներին համապատասխան մասնագետների պատրաստման և ՀՀ կառավարության կողմից հաստատված բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկով սահմանված համապատասխան որակավորման շնորհման գործընթացը:
2. **ՄԿԾ-ի նկարագիր.** ՄԿԾ-ն բնութագրող ամփոփ փաստաթուղթ, որն սահմանում է ՄԿԾ-ի կառուցվածքը, բովանդակային բաղադրիչները, ակադեմիական կրեդիտների կիրարկումը, սովորողի ընդունելության, ուսումնառության, հետազոտական աշխատանքի, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, ավարտման և ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ այլ պայմաններն ու պահանջները: ՄԿԾ-ի նկարագիրը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն ԲՊՀ շահահառուներին, այդ թվում՝ ուսանողներին, դասախոսական և վարչական կազմին, գործատուներին, փորձագետներին և այլոց:
3. **ՄԿԾ-ի բաղադրիչ.** ՄԿԾ-ում սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը միտված առանձին բովանդակային միավոր, որը սովորողի կողմից յուրացվում կամ իրականացվում է ուսումնառության տարբեր փուլերում: ՄԿԾ-ի բաղադրիչներ են դասընթացը, մոդուլը, պրակտիկան կամ փորձնակությունը, պրակտիկումը, հետազոտական աշխատանքը և այլն, ինչպես նաև ավարտական աշխատանքը՝ բակալավրիատում, մագիստրոսական թեզը՝ մագիստրատուրայում, ատենախոսությունը՝ ասպիրանտուրայում:
4. **Ուսումնառության վերջնարդյունքներ.** գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների (կոմպետենցիաների) համախումբ, որը սովորողը պետք է ձեռք բերի և կարողանա դրսևորել ՄԿԾ-ի կամ դրա առանձին դասընթացի (մոդուլի) ավարտին:

Ուսումնառության վերջնարդյունքները ձևակերպվում են որպես չափելի, դիտարկելի և հստակ շարադրված պնդումներ՝ հանդիսանալով սովորողի ուսումնառության արդյունքնում ակնկալվող գիտելիքի, հմտությունների և կարողունակությունների նվազագույն նպատակային թիրախներ կամ կողմնորոշիչներ:

5. **ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները** հիմք են հանդիսանում սովորողների ամփոփիչ ատեստավորման և որակավորման շնորհման համար: ՄԿԾ-ում սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից բխում են դրա առանձին դասընթացների (մոդուլների) և այլ բաղադրիչների վերջնարդյունքները:

   ՄԿԾ-ները ներառում են ուսումնառության **ընդհանրական և մասնագիտական վերջնարդյունքներ**:

   Ընդհանրական վերջնարդյունքներն միասնական են բարձրագույն կրթության տվյալ մակարդակի որևէ կրթական ոլորտի (ենթաոլորտի) մասնագիտությունների որոշակի խմբի բոլոր ՄԿԾ-ների համար և ընդհանուր առմամբ համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ի և տվյալ ՈՈՇ-ի համապատասխան մակարդակի բնութագրիչներին: Այսինքն՝ դրանք ընդհանուր են որակավորումների որոշակի խմբի ցանկացած մասնագիտության ՄԿԾ-ների համար:

   Մասնագիտական վերջնարդյունքները բնորոշում են տվյալ մասնագիտությանը և ձեռք են բերվում տվյալ ՄԿԾ-ով ուսուցանվող դասընթացներիների (մոդուլների) և ՄԿԾ-ի այլ բաղադրիչների միջոցով:

6. **ԿՓԵՀ (ECTS)**[2] ակադեմիական **կրեդիտ (այսուհետ՝ Կրեդիտ).** դասընթացի (մոդուլի) ուսումնառության վերջնարդյունքները ձեռք բերելու համար սովորողի ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր, որն արտահայտվում է վերջնարդյունքների ձեռքբերման համար պահանջվող ժամանաքանակով և շնորհվում է սովորողին դասընթացը (մոդուլը) հաջող ավարտելու (դրական գնահատական ստանալու) դեպքում:

   Կրեդիտներով սահմանվող ուսումնական բեռնվածությունը ներառում է սովորողի լսարանային պարապմունքները, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար ու գործնական պարապմունքներին, լաբորատոր, անհատական աշխատանքների, պրակտիկաների, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը,

[2] ԿՓԵՀ՝ կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ECTS – European Credit Transfer System)

քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը և այլն:

Սովորողին որոշակի կրեդիտների շնորհումը չի փոխարինում ՄԿԾ-ով սահմանված չափանիշների հիման վրա սովորողի ընթացիկ և ամփոփիչ գնահատումը:

7. **Ուսումնական բեռնվածություն.** ուսումնառության հետ կապված բոլոր պարապմունքների և աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ժամաքանակ, որն արտահայտվում է կրեդիտներով:

Բակալավրի որակավորում շնորհող ՄԿԾ-ների բեռնվածությունը կազմում է 180-240 կրեդիտ, մագիստրոսի աստիճան շնորհող ՄԿԾ-ներինը՝ 90-120 կրեդիտ:

Առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը 60 կրեդիտ է, իսկ կիսամյակայինը՝ 30 կրեդիտ (կիսամյակների միջև +/-10% շեղման հնարավորությամբ):

Հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը 48 կրեդիտ է, կիսամյակայինը՝ 24 կրեդիտ (կիսամյակների միջև +/-10% շեղման հնարավորությամբ): Բացառություն են կազմում հեռակա ուսուցմամբ 2 տարի տևողությամբ 90 կրեդիտ ունեցող մագիստրոսական ՄԿԾ-ները, որոնց դեպքում ուսանողի տարեկան լրիվ բեռնվածությունը 45 կրեդիտ է:

120 կրեդիտ ունեցող **առկա ուսուցմամբ մագիստրոսական** ՄԿԾ-ների դեպքում կրեդիտների +/-10% շեղումը կիսամյակների միջև հնարավոր է 1-ին ուսումնական տարում: **Հեռակա ուսուցմամբ** 120 կրեդիտ ունեցող **մագիստրոսական** ՄԿԾ-ների դեպքում կրեդիտների +/-10% շեղումը կիսամյակների միջև հնարավոր է 1-ին և 2-րդ ուսումնական տարիներում, իսկ 90 կրեդիտ ունեցող ՄԿԾ-ների դեպքում՝ կրեդիտների շեղումը հնարավոր է միայն 1-ին ուսումնական տարում: Երկու կիսամյակների միջև կրեդիտների շեղման դեպքում տարեկան հանրագումարային կրեդիտների քանակը պահպանվում է:

Բալալավրիատում և մագիստրատուրայում ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է (ներառյալ՝ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը), որը համարժեք է 1,5 կրեդիտի:

Ասպիրանտական ՄԿԾ-ների լրիվ ծանրաբեռնվածությունը 180 կրեդիտ է, որից 130 կրեդիտը հատկացվում է հետազոտական բաղադրիչին, իսկ 50-ը՝ կրթական:

8. **Ուսումնառության տևողություն.** ՄԿԾ-ի բաղադրիչների կատարման ու յուրացման և ՄԿԾ-ով ուսումնառությունն ավարտելու համար սահմանվող

ընդհանուր ժամանակահատված, որը արտացոլվում է ՄԿԾ-ի նկարագրում և ուսումնական պլանում:

Առկա ուսուցման համակարգում 90 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ների ուսումնառության տևողությունը 1,5 տարի է (3 կիսամյակ), 120 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ներինը՝ 2 տարի (4 կիսամյակ), և 180 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ներինը՝ 3 տարի (6 կիսամյակ) և 240 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ներինը՝ 4 տարի (8 կիսամյակ), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 90 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ների ուսումնառության տևողությունը 2 տարի է (4 կիսամյակ), 120 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ներինը՝ 2,5 տարի (5 կիսամյակ) և 180 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ներինը՝ 4 տարի (8 կիսամյակ) և 240 կրեդիտ ծավալով ՄԿԾ-ներինը՝ 5 տարի (10 կիսամյակ):

9. **Կարողունակություն (կոմպետենցիա).** գիտելիքի, հմտությունների, կարողությունների և անձնական հատկանիշների ամբողջություն, որն անձի կողմից կիրառվում է արդյունավետ գործելու և տեսանելի արդյունքների հասնելու նպատակով: Տվյալ ՄԿԾ-ի շրջանավարտի կարողունակությունները բնորոշվում են ելնելով նրա մասնագիտական գործունեության տեսակից և խնդիրների շրջանակից:
10. **ՄԿԾ-ի շահառու.** անձ, որն անմիջականորեն օգուտ է ստանում ՄԿԾ-ի իրականացումից: ՄԿԾ-ի ներքին շահառուներն են բուհի ուսանողները և աշխատակազմը, իսկ արտաքին շահառուները՝ շրջանավարտները, գործատուները և այլ անձիք:
11. **Ռեսուրսային ապահովվածություն.** տվյալ ՄԿԾ-ի լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ:
12. **ՊԻԳԲ[3] շրջափուլ**. ՄԿԾ-ի որակի կառավարման սկզբունք, որի հիման վրա իրականացվում է քառափուլ գործընթաց՝ պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում: ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը թույլ է տալիս հավաստիանալ, որ տվյալ ՄԿԾ-ն իրականացվում է որակի ապահովման համընդհանուր սկզբունքներին ու մոտեցումներին, ազգային ու միջազգային չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան:
13. **ՄԿԾ-ների բենչմարքինգ (հենանիշավորում).** առաջավոր փորձի վերհանման և կիրառման նպատակով այլ բուհերի (հայկական և օտարերկրյա) նույնաբովանդակ ՄԿԾ-ների կառուցվածքի ու բովանդակության համեմատական վերլուծության և բուհում դրա ներդրման հնարավորությունների գնահատման գործընթաց:

[3] Անգլերեն համարժեքը՝ PDCA- Plan-Do-Check-Act:

II. ՄԿԾ-ի ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

14. ՄԿԾ-ի մշակման գործընթացը հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1) **համապատասխանություն.** ՄԿԾ-ն համապատասխանում է ՀՀ ՈԱԾ-ին և համապատասխան ՈՈԾ-ին, պետական հավատարմագրման չափանիշներին ու չափորոշիչներին, ԲՊՀ շահառուների կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև համահունչ է ռազմավարական զարգացման ծրագրով սահմանված ԲՊՀ առաքելությանը և ռազմավարական նպատակներին,
2) **հաշվետվողականություն և թափանցիկություն.** ԲՊՀ-ն ապահովում է ՄԿԾ-ին և դրա բաղադրիչներին առնչվող տեղեկատվության հասանելիությունը ներքին և արտաքին շահառուներին, ինչպես նաև ՄԿԾ-ի իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակայնությունը,
3) **շարունակական բարելավում.** ԲՊՀ-ն շարունակաբար մշտադիտարկում, գնահատում և բարելավում է ՄԿԾ-ները՝ ապահովելով դրանց արդիականությունն ու մրցունակությունը, ինչպես նաև որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացումը,
4) **ուսումնառության վերջնարդյունքների հստակություն և չափելիություն.** ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները չափելի են և հստակ ձևակերպված, ինչը թույլ է տալիս իրականացնելու ուսանողների գիտելիքների, հմտությունների ու կարողունակությունների ստույգ և հավաստի գնահատում,
5) **արժանահավատություն**. ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքներն ապահովում են արժանահավատ որակավորման շնորհում,
6) **ներգրավվածություն**. ՄԿԾ-ի մշակման, իրականացման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթացում ԲՊՀ-ն ներգրավում է իր հիմնական շահառուներին՝ հաշվի առնելով նրանց կարիքները, պահանջները և կարծիքները:

III. ՄԿԾ-Ի ՆԿԱՐԱԳԻՐԸ

15. ՄԿԾ-ի նկարագիրը ներառում է ստորև նշված բաժինները և տեղեկությունները: (*ՄԿԾ-ի նկարագրի ձևաչափը տրված է կից Հավելված.1.1-ում*):

16. **ՄԿԾ-ի ընդհանուր բնութագիրը** (**ընդհանուր տվյալներ ՄԿԾ-ի մասին**), որը ներառում է հետևյալ տեղեկությունները՝

   1) **կրթական ոլորտի, ենթաոլորտի, մասնագիտության և ՄԿԾ-ի անվանումները՝ համապատասխան դասիչներով.** նշվում են կրթական ոլորտը, ենթաոլորտը, մասնագիտությունը և ՄԿԾ-ի անվանումը՝ յուրաքանչյուրի դասիչներով՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ

բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկի» և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկի»,

2) **կրթական մակարդակը.** նշվում է ՀՀ ՈԱԾ-ով սահմանված այն մակարդակը, որում իրականացվում է ՄԿԾ-ն,
3) **շնորհվող որակավորումը**, նշվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկով» տվյալ մասնագիտության ՄԿԾ-ների համար սահմանված որակավորումը,
4) **սովորողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը.** նշվում է ԿՓԵՀ կրեդիտների ընդհանուր քանակը, որը սովորողը պետք է կուտակի ՄԿԾ-ով ուսումնառությունն ավարտելիս, ընդ որում կրեդիտների ընդհանուր քանակը չի կարող պակաս լինել բարձրագույն կրթության տվյալ մակարդակի համար օրենքով և ՀՀ ՈԱԾ-ով սահմանված նվազագույն քանակից կամ գերազանցել այն:
5) **ուսումնառության տևողությունը.** նշվում է ՄԿԾ-ի իրականացման ընդհանուր տևողությունը՝ ըստ տարիների կամ ամիսների, որը չի կարող լինել պակաս որակավորման տվյալ մակարդակի համար օրենքով և ՀՀ ՈԱԾ-ով սահմանված նվազագույն տևողությունից կամ գերազանցել այն,
6) **ուսուցման ձևը**. նշվում է տվյալ ՄԿԾ-ով ուսուցումն իրականացնելու ձևը, որը կարող է լինել առկա, հեռակա կամ հեռավար (դիստանցիոն),
7) **ուսուցման լեզուն.** նշվում է տվյալ ՄԿԾ-ի ուսուցման լեզուն, որը որպես կանոն գրական հայերենն է, սակայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով ուսուցումը կարող է իրականացվել նաև օտար լեզվով,
8) **ՄԿԾ-ին ներկայացվող մուտքային պահանջները.** սահմանվում են ՄԿԾ-ով ուսումնառելու համար դիմորդներին ներկայացվող ԲՊՀ ընդունելության պահանջներն ու մրցութային ընտրության պայմանները, մասնավորապես՝ պահանջվող նախորդ կրթական որակավորումը, ընդունելության քննությունների ցանկը և այլ պայմանները,
9) **ՄԿԾ-ի ելքային պահանջները.** ում սահմանվում են ՄԿԾ-ով ուսումնառությունն ավարտելու և համապատասխան որակավորումը շնորհելու համար սովորողներին ներկայացվող պահանջները (ՄԿԾ-ի բոլոր դասընթացները (մոդուլները), պրակտիկան, կուրսային և հետազոտական աշխատանքները և այլ բաղադրիչները դրական գնահատականներով ավարտում և սահմանված կրեդիտների կուտակում), այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորման պահանջները և ձևերը բակալավրիատում (ավարտական աշխատանքի պատրաստում և

պաշտպանություն) և մագիստրատուրայում (մագիստրոսական թեզի պատրաստում և պաշտպանություն), իսկ ասպիրանտուրայում՝ տարեկան ատեստավորումները և ատենախոսության պատրաստումը և պաշտպանությունը:

17. **ՄԿԾ-ի անհրաժեշտությունը.** Այս բաժնում հիմնավորվում է տվյալ մասնագիտության կարևորությունը գլոբալ զարգացումների արդի միտումների և Հայաստանի տնտեսության զարգացման տեսանկյունից, նկարագրում է հայկական և գլոբալ աշխատաշուկայում տվյալ ՄԿԾ-ի շրջանավարտների պահանջարկը և այլն:

18. **ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները**. Այս բաժնում ընդհանուր ձևով նշում է, թե ինչու է ուսուցանվում տվյալ ՄԿԾ-ն, ինչ է ուսուցանվում դրա շրջանակներում, մասնագիտական և անձնական ինչպիսի կարողունակություններով մասնագետ է պատրաստում այն, մասնավորապես՝ տրամադրվող տեսական և գործնական գիտելիքների և հմտությունների շրջանակը: ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները պետք է ուրվագծեն նաև այն վերջնարդյունքները, որոնք կարող են ձեռք բերել ծրագրով ուսումնառող սովորողները: ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները շարադրվում են պարզ և հստակ՝ հաշվի առելով ՄԿԾ-ի և դրա բաղադրիչների մասնագիտական առանձնահատկությունները և ուղղվածությունը:

19. **ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները.** Այս բաժնում ներկայացվում են սովորողից ակնկալվող գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների շրջանակը, մասնավորապես, թե ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել սովորողն ուսումնառության ավարտին:

Ուսումնառության վերջնարդյունքները հիմք են հանդիսանում դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման ձևերի որոշման համար, ուստի պետք է սերտորեն փոխկապակցված լինեն սովորողի գնահատման սկզբունքների և չափանիշների, ինչպես նաև բեռնվածության (ուսումնառության աշխատատարության) ծավալի որոշման հետ:

Ուսումնառության վերջնարդյունքները հիմք են հանդիսանում նաև ՄԿԾ-ի առանձին բաղադրիչների՝ դասընթացների (մոդուլների) և այլնի միջև կրեդիտների բաշխման համար:

Ուսումնառության վերջնարդյունքները պետք է լինեն ոչ մեծաթիվ, կոնկրետ, իրատեսական, չափելի և շարադրված հստակ ու հակիրճ: Դրանց ձևակերպման համար կիրառվում է Բլումի տաքսոնոմիան և օգտագործվում են տաքսոնոմիայի տարբեր մակարդակների իմացության ձևերը ցուցանշող բայերը:

Ուսումնառության վերջնարդյունքները սահմանվում են որպես ընդհանրական և մասնագիտական՝ համաձայն ՄԿԾ-ի համապատասխան կառուցամասերի, և համարակալվում հերթական համարով (օրինակ՝ ՈՒՎ 1, ՈՒՎ

2 և այլն): Ընդհանրական վերջնարդյունքների թիվը չի կարող գերազանցել մասնագիտական վերջնարդյունքների թիվը:

Ընդհանրական և մասնագիտական ուսումնառության վերջնարդյունքները ներկայացվում են գիտելիք, հմտություններ և կարողություններ դասակարգմամբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող (մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող) սովորողների համար ՄԿԾ-ի դասընթացներում և այլ բաղադրիչներում սահմանվում են այնպիսի ուսումնառության վերջնարդյունքներ և ընտրվում են դասավանդման, ուսուցման և գնահատման այն ձևերը և մեթոդները, որոնք հաշվի են առնում ԿԱՊԿ ունեցող սովորողների գնահատված կրթական կարիքները:

20. **ՄԿԾ-ի կառուցվածքը և բովանդակությունը, ՄԿԾ-ի քարտեզագրումը՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների.** Այս բաժնում ներկայացվում են սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման համար ՄԿԾ-ի առանձին բաղադրիչները՝ դասընթացները (մոդուլները), պրակտիկան կամ փորձնակությունը և այլ բաղադրիչները:

ՄԿԾ-ում ներառված մասնագիտական և նեղ մասնագիտական յուրաքանչյուր դասընթացի (մոդուլի) համար տրվում է դրա համառոտ նկարագիրը (նպատակները) և անհրաժեշտության հիմնավորումը, որում հստակ նշվում է, թե ինչպես է այն ապահովում ՄԿԾ-ի ընդհանուր նպատակի ու խնդիրների իրականացումը:

Դասընթացները (մոդուլները) լինում են ուսումնառության համար պարտադիր և կամընտրական: Կամընտրական դասընթացների (մոդուլների) թիվը չի կարող գերազանցել պարտադիրների թիվը:

Բացի այդ, կատարվում է ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների ու առանձին դասընթացների (մոդուլների) **քարտեզագրում,** որով ցույց է տրվում դրանց միջև փոխկապակցվածությունը: Այսինքն, հստակ մատնանշվում են ՄԿԾ-ի ուսումնառության այն վերջնարդյունքները, որոնց ապահովման համար ուսուցանվում է տվյալ դասընթացը (մոդուլը) կամ իրականացվում ՄԿԾ-ի այլ բաղադրիչը: ՄԿԾ-ի դասընթացների (մոդուլների) ու այլ բաղադրիչների և ուսումնառության վերջնարդյունքների կապը արտացոլվում է **մատրիցային քարտեզի լրացմամբ** *(ՄԿԾ-ի քարտեզագրման ձևաչափը տրված է կից Հավելված 1.2-ում):*

21. **Ուսումնական պլանը.** Այն ամփոփ ձևով ներկայացնում է ՄԿԾ-ի ընդհանուր կառուցվածքն ու բովանդակությունը: Ուսումնական պլանը ներառում է ՄԿԾ-ի բոլոր դասընթացները (մոդուլները) և այլ բաղադրիչները՝ ներկայացված ըստ

կառուցամասերի, ուսումնական կիսամյակների և յուրաքանչյուրին հատկացված կրեդիտների ու ժամաքանակի:

Բակալավրիատի ՄԿԾ-ների ուսումնական պլանում ներառված դասընթացները (մոդուլները) և այլ բաղադրիչները դասակարգվում են ըստ՝ «Ընդհանուր հումանիտար և սոցիալական դասընթացներ», «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ», «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ», «Նեղ մասնագիտական դասընթացներ» և «Հետազոտական բաղադրիչ» կառուցամասերի:

Մագիստրատուրայի ՄԿԾ-ների ուսումնական պլանում ներառված դասընթացները (մոդուլները) և այլ բաղադրիչները դասակարգվում են ըստ՝ «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ», «Նեղ մասնագիտական դասընթացներ» և «Հետազոտական բաղադրիչ» կառուցամասերի:

Ասպիրանտական ՄԿԾ-ներում ներառված դասընթացները (մոդուլները) և այլ բաղադրիչները դասակարգվում են ըստ՝ «Կրթական» և «Հետազոտական» կառուցամասերի:

Կառուցամասերում հիմնականում ներառվում են պարտադիր և կամընտրական դասընթացներ (մոդուլներ):

ՄԿԾ-ի դասընթացների (մոդուլների) և այլ բաղադրիչների բաշխումը ըստ ուսումնական կիսամյակների կատարվում է տրամաբանական հաջորդականությամբ՝ ըստ նախապայման հանդիսացող իմացության հենքի, գիտելիքի և հմտությունների ձեռքբերման հաջորդականության ու շարունակականության սկզբունքի *(բակալավրական և մագիստրոսական ՄԿԾ-ների ուսումնական պլանի ձևաչափը տրված է կից Հավելված 1.3–ում, իսկ ասպիրանտական ՄԿԾ-ների ուսումնական պլանը՝ Հավելված 1.4-ում):*

22. **Պրակտիկան և (կամ) փորձնակությունը**. Այս բաժնում նկարագրվում է պրակտիկայի և (կամ) փորձնակության նպատակը և խնդիրները, տևողությունը, հատկացվող կրեդիտները, դրա կազմակերպման, մշտադիտարկման և գնահատման ձևը, ինչպես նաև պրակտիկայի անցկացման հնարավոր կազմակերպությունների շրջանակը:

23. **Հետազոտական բաղադրիչը.** Այս բաժնում նկարագրվում են այն հետազոտական աշխատանքները, որոնք պետք է իրականացնի սովորողը ուսումնառության ընթացքում, այդ թվում՝ պահանջվող ավարտական աշխատանքի, մագիստորսական թեզի կամ ատենախոսության պատրաստման համար, և ինչպես պետք է ձևակերպվեն դրանց արդյունքները (զեկույցով, հաշվետվությամբ, ռեֆերատով, հոդվածով, կուրսային կամ ավարտական աշխատանքով, թեզով, ատենախոսությամբ և այլն):

24. **Ռեսուրսային ապահովվածությունը.** Այս բաժնում ներկայացվում են ՄԿԾ-ի իրականացման և սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները, ինչը հավաստում է ՄԿԾ-ն հաջողությամբ իրականացնելու ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունը: Մասնավորապես՝ նկարագրվում են անհրաժեշտ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը և նրանց մասնագիտական պատրաստվածության ու փորձի պահանջները, ենթակառուցվածքները, սարքավորումներն ու տեխնիկական այլ միջոցները, ուսումնական և օժանդակ նյութերը (տպագիր, էլեկտրոնային, համացանցային):
25. **Հետագա ուսումնառության և աշխատանքի հնարավորությունները.** Այս բաժնում ներկայացվում են ՄԿԾ-ի շրջանավարտների հետագա ուսումնառության հնարավորությունները, ինչպես նաև մասնագիտական առաջխաղացման ու աշխատաշուկայում զբաղվածությանն առնչվող տեղեկատվությունը: Մասնավորապես, հստակեցվում են հետագա մասնագիտական զբաղվածությանն առնչվող հնարավոր գործառույթների շրջանակը, աշխատանքային գործունեության ոլորտներն ու հնարավոր կազմակերպությունների շրջանակը:
26. **Սովորողների գնահատումը.** Այս բաժնում ներկայացվում է ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող գնահատման սկզբունքները, ձևերն ու մեթոդները, ինչպես նաև գնահատման սանդղակը: Գնահատման սկզբունքները պետք է ապահովեն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման ձևերի ու մեթոդների համահունչ լինելը: ՄԿԾ-ով սահմանված գնահատման ձևերը և մեթոդները պետք է լինեն բազմազան և նպաստեն սովորողների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռքբերմանը և ապահովեն դրանց անաչառ, հավաստի ու արժանահավատ գնահատմանը:
27. **Ամփոփիչ կամ տարեկան ատեստավորումը.** Այս բաժնում նկարագրվում է բակալավրական ՄԿԾ-ների դեպքում ավարտական աշխատանքի, իսկ մագիստրոսական ՄԿԾ-ների դեպքում՝ մագիստրոսական թեզի, պատրաստման և հրապարակային պաշտպանության գործընթացները և ամփոփիչ ատեստավորմանը հատկացվող կրեդիտները: Ասպիրանտական ՄԿԾ-ների համար նկարագրվում է տարեկան ատեստավորմնան պահանջները:
28. **ՄԿԾ-ում ներառված դասընթացների և (կամ) մոդուլների նկարագիրը**. ՄԿԾ-ում ներառված յուրաքանչյուր դասընթացի (մոդուլի) նկարագիրը կազմում է ՄԿԾ-ի փաթեթի մասը և ներառում է դրա անհրաժեշտության հիմնավորումը, նպատակն ու խնդիրները, ուսումնառության վերջնարդյունքները, հատկացված կրեդիտները, թեմատիկ պլանը՝ ըստ շաբաթների, պահանջվող պարտադիր և լրացուցիչ գրականության (տպագիր, էլեկտրոնային, համացանցային) ցանկը,

ինչպես նաև դասընթացի յուրացումը ստուգելու նպատակով սովորողի գնահատման պարբերականությունը, ձևերը, մեթոդներն ու միավորային սանդղակը *(դասընթացների (մոդուլների) նկարագրի ձևաչափը տրված է կից Հավելված 1.5-ում):*

IV. ՄԿԾ-ի ՄՇԱԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

29. ՄԿԾ-ի մշակման գործընթացը պետք է հիմնված լինի բարձրագույն կրթության ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրության և ինչպես նաև ԲՊՀ-ի ներքին իրավական ակտերի վրա:
30. ՄԿԾ-ի մշակման փուլում պետք է հաշվի առնվեն ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները, ռեսուրսային ապահովվածությունը, ներառյալ ենթակառուցվածքները լսարանային ֆոնդը և այլ ենթակառուցվածքները:
31. ՄԿԾ-ի մշակման արդյունքում պետք է ապահովել՝
    1) ՄԿԾ-ի ներդրման նպատակով դրա կարևորության, արդիականության և մրցունակության հիմնավորումը և առաջադեմ բուհերի նույնաբովանդակ ՄԿԾ-ների համեմատական վերլուծության արդյունքների առկայությունը (բենչմարքինգի արդյունքներ),
    2) միջնակարգ կրթության շրջանավարտների ու գործատուների շրջանում ՄԿԾ-ի պահանջարկի ուսումնասիրության արդյունքերը (հարցումների արդյունքներ),
    3) ներքին (դասախոսական կազմ, ուսանողներ) և արտաքին (այդ թվում՝ դպրոցի շրջանավարտներ, ոլորտի առաջատար մասնագետներ, փորձագետներ, պոտենցիալ գործատուներ) շահառուների կարծիքներն ու առաջարկություններն արտացոլող և ՄԿԾ-ի մշակման գործընթացում նրանց ներգրավվածությունը փաստող հիմքերի առկայությունը (համապատասխան ուսումնասիրությունների և հարցումների արդյունքներ),
    4) ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների (մարդկային, նյութական, ֆինանսական) ապահովվածության հիմնավորումը,
    5) ՄԿԾ-ի ամբողջական փաթեթի (ներառյալ նկարագրի) առկայությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ***Հավելված 1.1.*** Մասնագիտության կրթական ծրագրի նկարագրի ձևաչափ
2. ***Հավելված 1.2.*** Մասնագիտության կրթական ծրագրի քարտեզագրման ձևաչափ
3. ***Հավելված 1.3.*** Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլանի ձևաչափ
4. ***Հավելված 1. 4.*** Ասպիրանտական կրթական ծրագրի ուսումնական պլանի ձևաչափ
5. ***Հավելված 1.5.*** Դասընթացի (մոդուլի) նկարագրի ձևաչափ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.1.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՁԵՎԱՉԱՓ

ՄԿԾ-ի ընդհանուր բնութագիրը (ընդհանուր տվյալներ ՄԿԾ-ի մասին)		
1.	**Կրթական ոլորտ**	/դասիչ, անվանում/
2.	**Ենթաոլորտ**	/դասիչ, անվանում/
3.	**Մասնագիտություն**	/դասիչ, անվանում/
4.	**Կրթական ծրագիր**	/դասիչ, անվանում/
5.	**Կրթական մակարդակ**	/ՈԱՇ-ի համապատասխան մակարդակ/
6.	**Շնորհվող որակավորում**	/անվանում/
7.	**Ուսանողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալ**	/ԿՓԵՀ կրեդիտներ/
8.	**Ուսումնառության տևողություն**	/տարիներ/
9.	**Ուսուցման ձև**	/առկա/հեռակա/
10.	**Ուսուցման լեզու**	*/հայերեն կամ օտար լեզու/*
11.	**ՄԿԾ-ին ներկայացվող մուտքային պահանջներ**	/նախորդ նվազագույն որակավորում, քննություններ և այլն/
12.	**ՄԿԾ-ին ներկայացվող ելքային պահանջներ**	*/պահանջվող կրեդիտների կուտակում, ամփոփիչ ատեստավորում և այլն/*

13. ՄԿԾ-ի անհրաժեշտությունը

14. ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները

15. ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները (ՈՒՎ)
Ընդհանրական վերջարդյունքներ՝ Գիտելիք ՈՒՎ 1 ՈՒՎ 2 …

Հմտություններ ՈՒՎ 3 ՈՒՎ 4 … Կարողություններ ՈՒՎ 5 ՈՒՎ6 ….
Մասնագիտական վերջարդյունքներ՝ Գիտելիք ՈՒՎ 1 ՈՒՎ 2 Հմտություններ ՈՒՎ 3 ՈՒՎ 4 Կարողություններ ՈՒՎ 5 ՈՒՎ 6

16. ՄԿԾ-ի մասնագիտական և նեղ մասնագիտական դասընթացների համառոտ նկարագիրը՝ ըստ ուսումնական պլանի դասընթացների (մոդուլների) հերթական համարի				
	Դասընթաց (մոդուլ) */անվանում/*	**Կրեդիտ**	**Ժամ**	**Պարտադիր/Կամընտրական** */ընտրել/*
1.				
2.				
3.				

17. Պրակտիկա և (կամ) փորձնակություն

18. Հետազոտական բաղադրիչ

19. Ռեսուրսային ապահովվածություն

20. Հետագա ուսումնառության և աշխատանքի հնարավորությունները

21. Գնահատում

22. Ամփոփիչ ատեստավորում

ՀԱՎԵԼՎԱԾ 1.2.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ / ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

/թողնել մեկը/

_____

/ՄԿԾ-ի լրիվ անվանումը/

N	**ՄԿԾ-ի դասընթացներ (մոդուլներ) և այլ բաղադրիչներ** *(լրացնել դասընթացները (մոդուլները)՝ ըստ ուսպլանի համապատասխան կառուցամասի և հերթական համարի)*[4]	**Դասընթացի (մոդուլի) համարը՝ թվանիշով**	**ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքներ** *(նշել ՄԿԾ-ի ուսումնառության համապատասխան վերջնարդյունքի համարը)*											
I.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**													
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
1	Հայոց լեզու	1	ՈՒՎ 1	ՈՒՎ 5	…									
2	…	2												
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													
	…													
II.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**													
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													

[4] Մագիստրոսական ՄԿԾներին համար պահպանել III, IV, V կառուցամասերը և ավելացնել նաև ծին «Կամընտրական կառուցամաս», իսկ Կամընտրական դասընթացները լրացնել այդ կառուցամասում:

	…													
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													
	…													
III.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**													
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													
	…													
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													
	…													
IV.	**ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**													
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													
	…													
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)		1	2	3	4	5	6	7	8	9	10	…	…
	…													
	…													
V.	**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**													
	Կուրսային աշխատանք													
	Պրակտիկա													
	Պրակտիկում													
	Ամփոփիչ ատեստավորում													

Տողերի և սյունակների թիվը կարող է ավելացվել ըստ անհրաժեշտության:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.3.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՁԵՎԱՉԱՓ

Բակալավրիատ/մագիստրատուրա

Մասնագիտություն՝ ----------

/Դասիչ, մասնագիտության անվանում/

ՄԿԾ՝ ----------

/Դասիչ, ՄԿԾ-ի անվանում/

Ուսման տևողություն՝ ----------

Ուսուցման ձև՝ ----------

N	Դասընթացներ (մոդուլներ) և ՄԿԾ-ի այլ բաղադրիչներ՝ ըստ կառուցամասերի	Կրեդիտներ	Կիսամյակներ	Ընդամենը, ժամ	Դասախոսություն, ժամ	Գործնական, սեմինար, ժամ	Ինքնուրույն աշխ., ժամ	Կիսամյակներ 1	2	3	4	5	6	7	8
I.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ														
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)														
1															
2															
3															
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)														
II.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ														
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)														

	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)														
III.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**														
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)														
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)														
IV.	**ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**														
	Պարտադիր դասընթացներ (մոդուլներ)														
	Կամընտրական դասընթացներ (մոդուլներ)														
V.	**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**														
	Կուրսային աշխատանք														
	Պրակտիկա														
	Պրակտիկում														
	Ամփոփիչ ատեստավորում														
	Ընդամենը														

ՀԱՎԵԼՎԱԾ 1.4

ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՁԵՎԱՉԱՓ

Մասնագիտություն՝ ----------

/Դասիչ, մասնագիտության անվանում/

Ուսման տևողություն՝ ----------

Ուսուցման ձև՝ ----------

								Կիսամյակներ							
								1	2	3	4	5	6	7	8
N	**Դասընթացները՝ ըստ կառուցամասերի**	**Կրեդիտներ**	**Կիսամյակներ**	**Ընդամենը, ժամ**	**Դասախոսություն, ժամ**	**Գործնական, սեմինար, ժամ**	**Ինքնուրույն աշխ., ժամ**								
I.	**ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԲԱՂԱԴՐԻՉ)**	**50**		**1500**											
	Պարտադիր դասընթացներ, քննություններ	**30**													
1	Մասնագիտության դասընթաց՝ ըստ թվանիշի	**8**													
2	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն	**4**													
3	Մասնագիտական օտար լեզու	**4**													
4	Տեղետավական և կրթական նոր տեխնոլոգիաներ	**4**													
5	Պրակտիկա	**10**													
	Կամընտրական դասընթացներ և ստուգարքներ	**20**													
6															
7															
8															

9															
10															
II.	**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԲԱՂԱԴՐԻՉ)**	**130**	**3900**												
11	Ատենախոսության թեմայով հրատարակված անհրաժեշտ նվազագույն թվով աշխատանքներ	**30**													
12	Տարեկան ատեստավորում	**20**													
13	Ատենախոսություն և թեման հաստատած հաստատության դրական եզրակացությունը ատենախոսության վերաբերյալ	**80**													
	Ընդամենը	**180**	**5400**												

ՀԱՎԵԼՎԱԾ 1.5.

ԴԱՍԸՆԹԱՑԻ (ՄՈԴՈՒԼԻ) ՆԿԱՐԱԳՐԻ ՁԵՎԱՉԱՓ

Դասընթացի անվանում	*/Լրիվ անվանումը/*
Դասընթացի տեսակ	*/Նշել ՄԿԾ-ի կառուցամասը և դասընթացի տեսակը՝ պարտադիր կամ կամընտրական/*
Կրթական մակարդակ	
Ուսուցման ձև	
Ֆակուլտետ	
Կուրս	
Կիսամյակ	
Մասնագիտություն	*/Դասիչ, մասնագիտության անվանում/*
Կրթական ծրագիր	*/Դասիչ, կրթական ծրագրի անվանու/մ*
Ամբիոն / ԳՈՒԿ	
Կազմող դասախոս	*/Անուն, ազգանուն, հայրանուն/*
Դասախոսի գիտական կոչում, աստիճան	
Դասախոսի հեռախոս, էլ.փոստ	

Կրեդիտներ			
Գնահատման բաղադրիչներ	**Բաղադրիչ**	**%**	**Բաղադրիչի անվանումը**
	Բ1		
	Բ2		
	Բ3		
	Բ4		

*Դասընթացի առանձնահատկություններից ելնելով բաղադրիչները կարող են փոփոխել

Ամբիոն/ԳՈՒԿ			**Ֆակուլտետ**	
Վարիչ/Ղեկավար			**Դեկան**	
Ամսաթիվ	*Ստորագրություն*		*Ամսաթիվ*	*Ստորագրություն*

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ *(Նշել դասընթացի արդյունավետ յուրացման համար ուսանողին անհրաժեշտ նախնական գիտելիքները, հմտությունները, կարողությունները, ինչպես նաև անհրաժեշտ լսարանային պայմանները և սարքավորումները:)*	
2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ *(Հակիրճ նկարագրել դասընթացի բովանդակությունը, ինչ է այն ուսումնասիրում՝ հիմնական տեսությունները, հասկացությունները և այլն:)*	
2.1 Դասընթացի նպատակն ու խնդիրները *(Ձևակերպել դասընթացի հիմնական նպատակը և խնդիրները:)*	
2.2 Ուսումնառության վերջնարդյունքները *(ՈՒՎ)* *(Ձևակերպել, թե դասընթացի ավարտին ուսանող ինչ պետք է իմանա և կարողանա անել: Դասակարգել ուսումնառության արդյունքները ըստ բաղադրիչների՝ գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ)*	***Գնահատման մեթոդները / ձևերը*** *(Ներկայացնել գնահատման մեթոդները և ձևերը ըստ ուսումնական վերջնարդյունքների բաղադրիչների՝ գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ)*
Գիտելիքներ *ՈՒՎ 1* *ՈՒՎ 2* *...*	
Հմտություններ *ՈՒՎ 1* *ՈՒՎ 2* *...*	
Կարողունակություններ *ՈՒՎ 1* *ՈՒՎ 2* *...*	
2.3 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները՝ *(Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար ձևակերպել ուսումնառության արդյունքներ, որոնք ելնում են նրանց գնահատված կարիքներից: Դասակարգել ըստ բաղադրիչների՝ գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ:)*	

Գիտելիքներ

ՈՒՎ 1

ՈՒՎ 2

...

Հմտություններ

ՈՒՎ 1

ՈՒՎ 2

...

Կարողություններ

ՈՒՎ 1

ՈՒՎ 2

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՆ ՈՒ ՀՂՈՒՄՆԵՐԸ

(Նշել դասընթացի համար անհրաժեշտ գրականության ցանկը՝ դասակարգելով ըստ հիմնական և լրացուցիչ գրականության:)

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Նկարագրել դասախոսի կողմից ուսանողներին ներկայացվող լրացուցիչ պահանջները և պայմանները, օրինակ՝ էլեկտրոնային փոստից, համացանցից, ZOOM հավելվածից, համալսարանի Moodle հարթակից օգտվելու անհրաժեշտությունը, հանձնարարված առաջադրանքների կատարման և ներկայացման պահանջները, դասերից հաճախ բացակայելու կամ ուշանալու հետևանքները և այլն:)

5. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ՝ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ, ԹՎԱՅԻՆ ԵՎ ՏԱՌԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Վարկանիշային գնահատական (ՎԳ)		*Թվային գնահատական (ԹԳ)*	*Տառային գնահատական (ՏԳ)*
Առավելագույն	նվազագույն		
100	97	4.0	A
96.9	90	3.7	A
89.9	85	3.3	B
84.9	80	3.0	B
79.9	70	2.7	C
69.9	65	2.3	D
64.9	60	2.0	E
59.9	55	1.7	Fx
54.9	0	1.0	F

6. **ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ՝ ԸՍՏ ՇԱԲԱԹՆԵՐԻ**

(Ներկայացնել դասընթացի ամբողջական նյութն ըստ շաբաթների)

Շաբաթ 1

(Թեմա 1 / թեմայի անվանում, գրականություն)

.....

Շաբաթ 16

(Թեմա ... / թեմայի անվանում, գրականություն)

*Ցանկալի է դասընթացը բաժանել/խմբավորել ըստ մոդուլների կամ ներկայացնել որպես առանձին մոդուլ: